ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև համագործակցությունն ընթանում է մի քանի ուղղություններով, որի հիմքը դրվել է 1997թ. հոկտեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության մասին» համաձայնագրով: Մասնավորապես՝ 2001թ. օգոստոսի 28-ին Բեյրութում ստորագրվել և 2002թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվել է «Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և նպատակ ունենալով զարգացնել ու խորացնել հայ-լիբանանյան բարեկամությունն ու համագործակցությունը ռազմական ոլորտում՝ Հայաստանի Հանրապետությունը Լիբանանի Հանրապետության հետ ինչպես երկկողմ, այնպես էլ Միավորված ազգերի ժամանակավոր ուժերի շրջանակներում համագործակցության ընթացքում Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համատեղ 2014թ. հունիսի 3-ին Բրյուսելում ստորագրված և 2014թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարարության միջև Լիբանանում Միավորված ազգերի ժամանակավոր ուժերի շրջանակներում համագործակցության և օժանդակության մասին» տեխնիկական համաձայնագրի միջոցով լայնածավալ գործունեություն է ծավալել:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բարեկամության և գործընկերության կարևորությունը, հայկական սփյուռքի առկայությունն ու հայ խաղաղապահ ուժերի ներկայությունը տարածաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը դեռ 2015թ. սկսել էր «Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր կնքելու համար անհրաժեշտ ընթացակարգերը: Համաձայնագրի նախագիծը մշակվել էր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից և այուհետև փոխանցվել Լիբանանյան Կողմին:

2018թ. նոյեմբերի 2-ին Հայկական և Լիբանանյան Կողմերի միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական

բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցվում է 2001թ. օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի գործողությունը: Նոյեմբերի 2-ին ստորագրված համաձայնագիրը կարգավորում է երկու պետությունների միջև անվտանգության և պաշտպանական քաղաքականության, ռազմական արդյունաբերության, ռազմական գիտատեխնիկական հետազոտությունների, նյութատեխնիկական ապահովման աջակցության, ռազմական նշանակության արտադրանքի, ծառայությունների ձեռքբերման և մատակարարման, ռազմական ոլորտում կրթության և վարժանքների, ռազմական բժշկության և առողջապահության, ռազմահրավական պատրաստության, խաղաղությանն աջակցման, խաղաղապահ և մարդասիրական գործողությունների, զինված ուժերի կազմակերպման և կառավարման, կազմզորահավաքային պատրաստության, շրջակա միջավայրի խնդիրների և ռազմական գործողությունների հետևանքով աղտոտման, ռազմական պատմության և ռազմամարզական ուղղությունները, ինչպես նաև Կողմերի համաձայնությամբ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է գտնում սկսել սույն Համաձայնագրի վավերացման ապահովման հետ կապված օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը: